րից։ Ատրպատականի մէջ գտնուած Հայերի շատութեան մի ուրիշ ապացոյցն եւս այն է, որ երբ ԺԴ. դարում, 1333 թուին, Յովհան Քռնեցի կոչուած Վարդապետը հաստատեց Ունիտորների կարգը, որ այնքան շփոթութիւնների պատճառ դարձաւ, այդ կարգին պատկանող վարդապետներն իրանց վարդապետութեան քարոզութեան համար իբրեւ կենդրոն ընտրեցին Թաւրէզ, Մարաղա, Սուլթանիյէ քաղաքները Նախիջեւանի հետ։

Սուլթանիյէ եւ Ռէյ քաղաքների վրայ փոքր ինչ աւելի պէտք է կանգ առնենք։ Զգիտենք, ինչ հիման վրայ՝ մի քանի պատմագիրներ ասում են, որ իբր հին ժամանակներում Հայաստանի վերջին թագաւորներն իրանց պալատն այդտեղ էին պահում, եւ այդ ժամանակ 400 եկեղեցիներից աւելի կար այդ քաղաքում, եւ թէ այդ եկեղեցիների աւերակներն մինչեւ այժմ տեսնւում են։

Այստեղ յառաջ կը բերենք երկու վստահելի ճանապարհորդների կարծիքները Սուլթանիյէի մասին։ Շարդէն, իր գրքի Գ. հատորի մէջ գրում է։

"Սուլթանիյէ քաղաքը շինուած է մի լեռան ստորոտում. հեռուից շատ գեղեցիկ է երեւում, բայց մօտիկից ոչ։ Մի քանի հասարակական մեծ շինութիւններ կան՝ ճարտարապետութեան եւ քանդակագործութեան տեսակէտից. նա 3000 տուն ունի։ Բնիկներն ասում են, որ այդ քաղաքը յառաջ կէս մղոն տեղ էր բռնում, դէպ ի արեւմուտք, եւ այն եկեղեցիները, մզկիթները, աշտա-